ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/54 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«03» նոյեմբերի 2026թ.**
ժամը՝ 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ — Արթուր Մանուկյան
Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող՝ — Արմեն Թադևոսյան
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի բաժնի պետ՝ — Սերոբ Ավագյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ — Սոնա Շիրինյան

---

1. «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/54 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2026թ. հոկտեմբերի 29-ը ժամը 11:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2026թ. հոկտեմբերի 30-ի Ժամը 11:00-ից 11:30-ն՝ **eauction.armeps.am** համակարգի միջոցով:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Էլ փոստ	Հեռախոս	ՀՎՀՀ
1	ԴԵՎՈՊՍ ՊՐՈ ՍՊԸ	info@devopspro.am	+37444233224	05039531
2	ՎԱՐԻՏԵՔՍԻՍ ՍՊԸ	Varitexis2000@mail.ru	+37493878850	01096826
3	ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ ՍՊԸ	lllmanagment2025@gmail.com	+37444755456	01084956
4	dal dog	gnumnermal@mail.ru	+345222852525	125223333

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 , դեմ- 0

2. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հարցումներ չեն ստացվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 , դեմ- 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ.

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները ներկայացրել են հրավերով սահմանված փաստաթղթերը

3.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի վերաբերյալ.

3.2.1 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած ԴԵՎՈՊՍ ՊՐՈ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես

- Դիմում-հայտարարությունը և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ, ինչպես նաև ռուսերեն լեզվով անվանումը լրացված է հայերեն
- առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրում բացակայում է «Ապրանքային նշանը», «Մակնիշը/Մոդելը» և «Արտադրողի անվանումը»:

3.2.2 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած ՎԱՐԻՏԵՔՍԻՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես

- 3-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է «Մակնիշը/Մոդելը»:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 , դեմ-0

4. «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել ԴԵՎՈՊՍ ՊՐՈ ՍՊԸ –ին և ՎԱՐԻՏԵՔՍԻՍ ՍՊԸ-ին, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկեն նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2026 թվականի նոյեմբերի 5-ին, ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 1, 226 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 , դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Արթուր Մանուկյան	
Անդամներ՝	Արմեն Թադևոսյան	
	Սերոբ Ավագյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	